Կարգապահական գործ թիվ ԿԳ-24176

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԽԱՆՈՒՄ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի և Գուրգեն Թորոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ Զինա Թովմասյանի, դիմողի ներկայացուցիչ, փաստաբան՝ Մնացական Մարուքյանի,

քննության առնելով փաստաբան Խանում Սերյոժայի Մկրտչյանին (արտոնագիր՝ թիվ 278), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Զինա Թովմասյանը **(այսուհետև՝ նաև Դիմող),** դիմելով Պալատ, հայտնել է, որ իր շահերի պաշտպանության նպատակով դիմել է փաստաբան Խանում Մկրտչյանին **(այսուհետև՝ նաև Փաստաբան)** և վճարել է ծառայությունների մատուցման գումարը՝ փոխանցելով դրանք փաստաբանի սկեսրայր՝ Ալբերտ Մարգարյանի բանկային քարտին:

Դիմողը նշել է, որ 15.08.2024 թվականին փաստաբանին տվել է լիազորագիր, իսկ 25.09.2024 թվականին կնքել է փաստաբանական ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագիր **(այսուհետև՝ նաև Պայմանագիր),** որով Փաստաբանը պարտավորվել է ներկայացնել հայցադիմում ամուսնալուծության, ալիմենտի, երեխաների բնակության վայր իր բնակության վայրով սահմանելու և համատեղ ձեռք բերված գույքի, դրամական միջոցների ½-ը բռնագանձելու պահանջների մասին, ինչպես նաև իրականացնել ներկայացուցչություն դատական բոլոր ատյաններում:

Թիվ ԿԳ-24176-2-Ա
26.03.2025թ.

Դիմողը հայտնել է, որ փաստաբանն իրեն հավաստիացրել է նրանում, որ 16.08.2024 թվականին էլեկտրոնային եղանակով մուտքագրել է Դիմողի հայցը, իսկ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից արգելանք է դրվել համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված դրամական միջոցների հաշիվների վրա:

Դիմողը նշել է, որ հետագայում խնդրել է փաստաբանին տրամադրել հայցադիմումի և Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից ներկայացված պատասխանն արգելանք դնելու վերաբերյալ որոշման օրինակները, սակայն որևէ փաստաթուղթ չի ստացել նրանից, իսկ հետագայում դատարանից տեղեկացել է, որ փաստաբանը հայցադիմում չի ներկայացրել, ավելին 11.09.2024 թվականին ներկայացված է եղել Դիմողի ամուսնու՝ Տրդատ Քոսյանի հայցադիմումը:

Դիմողը հայտնել է, որ փաստաբանը որևէ գործողություն չի իրականացրել, ինչից հետո ինքը 15.10.2024 թվականին գրությամբ դիմել է վերջինիս՝ նրա լիազորությունները դադարեցնելու, պայմանագիրը լուծելու և վճարված գումարները վերադարձնելու պահանջով, սակայն որևէ պատասխան չի ստացել, այդ թվում իր բազմաթիվ զանգերին ու նամակներին:

Դիմողը հավելել է, որ 18.10.2024 թվականին ստացել է փաստաբանի գրությունն այն մասին, որ փաստաբանը համաձայնել է լուծել պայմանագիրը և կատարել վերահաշվարկ, պարտավորվելով փոխանցել գումարը Դիմողի հաշվին, սակայն մինչ օրս գումարը չի փոխանցել Դիմողին:

Վերոնշյալով պայմանավորված, Դիմողը խնդրել է փաստաբան Խանում Մկրտչյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Միևնույն ժամանակ սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 10.01.2025 թվականին Դիմողին առաջարկվել է «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև նաև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Ի պատասխան պահանջի Պալատում 17.01.2025թ. մուտքագրվել է Դիմողի պատասխան գրությունը և գրությանը կից ներկայացված փաստաթղթերը, մասնավորապես՝ վճարման անդորրագրերի և պայմանագրի պատճենները, որոնք նաև ներկայացվել էին դիմումին կից, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի միջև կատարված նամակագրության պատճենները և սքրինշոթերը:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Խանում Մկրտչյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Զինա Թովմասյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը բացատրությամբ հայտնել է, որ Դիմողի կողմից նկարագրված հանգամանքները չեն համապատասխանում իրականությանը:

Փաստաբանի պնդմամբ, ինքն ի սկզբանե մատուցել է խորհրդատվական բնույթի ծառայություններ, իսկ երբ Դիմողը ստացել է նրա ամուսնու կողմից ուղարկված սպառնալիքներ՝ կազմել և ներկայացրել է հաղորդում հանցագործության մասին:

Փաստաբանը նշել է, որ կատարել է գործողություններ քրեական գործին վերաբերող

գործով, ինչից հետո Դիմողը ցանկացել է կնքել պայմանագիր նաև՝ ամուսնալուծության, ալիմենտի, երեխաների բնակության վայր իր բնակության վայրով սահմանելու և համատեղ ձեռք բերված գույքի, դրամական միջոցների ½-ը բռնագանձելու նպատակով:

Փաստաբանը հայտնել է, որ կազմել է հայցադիմում, սակայն, քանի որ Դիմողը թիվ ԱՐԱԴ/0694/02/24 քաղաքացիական գործով ստացել էր իր ամուսնու հայցադիմումը, առաջարկել է սպասել վարույթ ընդունվելու մասին որոշմանը, հավելելով, որ դատական գործի առկայության հանգամանքը հնարավոր չէր ստուգել «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի միջոցով:

Փաստաբանը նշել է, որ պարտավորվել էր գործողություններ կատարել Դիմողի հորը վերաբերող թիվ ՍՆԴ/1172/04/23 սնանկության գործով, սակայն հասկանալով, որ Դիմողը չարաշահում է իր բարությունը, հրաժարվել է դրանից:

Փաստաբանի պնդմամբ, այդ ժամանակահատվածում ինքը կատարել է գործողություններ Դիմողին վերաբերող քրեական գործի շրջանակներում, սակայն հետագայում Դիմողի հետ հարաբերությունների վատթարացման արդյունքում քննարկել է ծառայությունների մատուցումը դադարեցնելու հարցը, սակայն այդ ընթացքում Դիմողն արդեն ուղարկել էր պայմանագիրը լուծելու մասին գրությունը:

Միևնույն ժամանակ սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Փաստաբանին ներկայացվել է 10.01.2025 թվականին կազմված պահանջ (այսուհետ՝ Պահանջ) Օրենքի 39.5-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ: Փաստաբանը չի ներկայացրել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցները:

Փաստաբանը 19.03.2025թ.-ին ներկայացրել է «Դիրքորոշում» վերտառությամբ փաստաթուղթը:

Փաստաբանը խնդրել է հետաձգել 26.02.2025թ.-ի Հանձնաժողովի նիստը, այնուհետև խնդրել է հետաձգել 26.03.2025թ.-ի Հանձնաժողովի նիստը, իսկ դրա անհնարինության դեպքում գործը քննել իր բացակայությամբ: Արդյունքում Փաստաբանը չի մասնակցել Հանձնաժողովի 26.02.2025թ.-ի և 26.03.2025թ.-ի նիստերին:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 21.11.2024թ. թիվ 406-Ա/ԿԳ-24176 որոշմամբ փաստաբան Խանում Սերյոժայի Մկրտչյանի նկատմամբ Օրենքի **19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետև նաև՝ Կանոնագիրք) 2.7.2-րդ, 3.5.5-րդ և 3.6.1-ին և 3.8.4-րդ (1) ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

26.11.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Դավիթ Առաքելյանին (**այսուհետև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. **<u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>**

Սույն կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 24.01.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-7-րդ կետերում նշված փաստերը:

24.01.2025թ. սույն կարգապահական գործը հանձնվել է Հանձնաժողովին:

5. **<u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի և Դիմողի միջև 15.08.2024թ. կնքված «Փաստաբանական ծառայություններ մատուցելու վերաբերյալ» պայմանագրով (այսուհետև՝ Պայմանագիր):*

2. Պայմանագրի 2.1 կետի ուժով Փաստաբանը պարտավորվել է Դիմողի անունից ներկայացնել հայցադիմում ամուսնալուծության, երեխայի բնակության վայրը Դիմողի բնակության վայրով սահմանելու, ալիմենտի և համատեղ ձեռք բերված դրամական միջոցների վրա ½ մասնաբաժնի չափով հօգուտ Դիմողի բռնագանձման պահանջներով: *Սույն փաստը հաստատվում է Պայմանագրով:*

3. Դիմողը Փաստաբանին վճարել է 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ: *Սույն փաստը հաստատվում է վճարման անդորրագրերի պատճեններով:*

4. Փաստաբանն ընդունել է Պայմանագիրը լուծելու Դիմողի առաջարկը և հայտնել է Դիմողին, որ վերահաշվարկ կատարելու արդյունքում հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել կփոխանցի Դիմողի հաշվեհամարին: *Սույն փաստը հաստատվում է 18.10.2024թ. կազմված N 025/24 գրությամբ:*

5. Փաստաբանը չի պատասխանել Դիմողին հետաքրքրող հարցերին և հանձնարարության ընթացքի մասին պատշաճ չի տեղեկացրել Դիմողին: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի 17.01.2024թ. գրությանը կից ներկայացված Դիմողի և Փաստաբանի նամակագրությունների սքրինշոթերի պատճեններով:*

6. Փաստաբանը Դիմողի անունից չի ներկայացրել հայցադիմում ամուսնալուծության, երեխայի բնակության վայրը Դիմողի բնակության վայրով սահմանելու, ալիմենտի և համատեղ ձեռք բերված դրամական միջոցների վրա ½ մասնաբաժնի չափով հօգուտ Դիմողի բռնագանձման պահանջներով և չի մասնակցել այդ հայցի հիման վրա հարուցված գործի քննությանը բոլոր դատական ատյաններում: Դիմողի անունից հայց չներկայացնելու արդյունքում թիվ ԱՐԱԴ/0694/02/24 քաղաքացիական գործով հայցադիմումը դատարան ներկայացվել է Դիմողի նախկին ամուսնու՝ Տրդատ Քոսյանի կողմից: *Սույն փաստը հաստատվում է թիվ ԱՐԱԴ/0694/02/24 քաղաքացիական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվություններով, կողմերի բացատրություններով, ինչպես նաև Դիմողի անունից հայցադիմումը մուտքագրված լինելու վերաբերյալ ապացույցի և «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում*

տեղեկատվության (այդ թվում էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգով) բացակայությամբ:

7. Փաստաբանը չի վերադարձրել Դիմողին հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարել: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի 17.01.2024թ. գրությանը կից ներկայացված Դիմողի և Փաստաբանի նամակագրության պատճեններով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի և տեղեկանքի հավելվածի համաձայն՝ Խանում Մկրտչյանը փաստաբան է հանդիսանում 30.08.1996 թվականից:

2018-2025թթ. ընկած ժամանակահատվածում ունի 4 կարգապահական տույժ, որոնցից երեքը՝ տուգանք, իսկ չորրորդը խիստ նկատողություն և 4 ակադեմիական ժամ «Դեոնթոլոգիա» թեմայով վերապատրաստման դասընթացի մասնակցելու պարտականություն: Նշված բոլոր տույժերը սույն որոշման կայացման պահի դրությամբ մարված չեն:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

7.1 Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Խանում Մկրտչյանը Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի և Կանոնագրքի 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի խախտման մասով ենթակա է պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ..

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար (...):*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս* ***իր մասնագիտական***

պարտականությունները *կատարել ողջամտորեն,* ***բարեխղճորեն****, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Պայմանագրի 1.1-ին կետի համաձայն՝ *սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել պայմանագիր 2.1 կետով սահմանված փաստաբանական ծառայությունները (այսուհետև՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել մատուցված ծառայությունները և իրականացնել համապատասխան վճարումներ:*

Պայմանագրի 2.1-ին կետի համաձայն՝ *կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրի շրջանակներում Կատարողը Պատվիրատուին մատուցվում է հետևյալ ծառայությունները՝*

Կազմել հայցադիմում իմ փոխարեն հանդես գալու իր կողմից դատարան ներկայացրած ամուսնալուծության, ալիմենտի, երեխայի բնակության վայրն իմ բնակության վայրով սահմանելու և համատեղ ձեռք բերված դրամական միջոցների ½ մասնաբաժնի չափով ի օգուտ ինձ բռնագանձելու վերաբերյալ գործով դատական բոլոր ատյաններում, մասնակցել գործի քննության դատական բոլոր ատյաններում:

Վերը նշված նորմատիվ իրավական ակտերի իրավական նորմերի, Կանոնագրքի կանոնների, ինչպես նաև Պայմանագրի դրույթների համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ փաստաբանը պարտավոր է իր վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ իր մասնագիտական պարտականությունները կատարել բարեխղճորեն և ժամանակին, մասնավորապես՝ ժամանակին **իրականացնել բոլոր անհրաժեշտ գործողություններն** իր վստահորդի հանձնարարությունը պատշաճ կատարելու համար:

Պայմանագրով Փաստաբանը պարտավորվել է Դիմողի անունից ներկայացնել հայցադիմում հետևյալ պահանջներով.

- Ամուսնալուծության,
- ալիմենտի բռնագանձման,
- համատեղ ձեռք բերված դրամական միջոցների ½ չափով գումարի բռնագանձման,
- երեխայի բնակության վայրը Դիմողի բնակության վայրով սահմանելու վերաբերյալ:

Տվյալ դեպքում «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում բացակայում են տեղեկություններ հայցվոր Զինա Թովմասյանի կողմից քաղաքացիական գործով որևէ հայց ներկայացված լինելու վերաբերյալ, ինչից հետևում է, որ Փաստաբանը Դիմողի անունից որևէ հայց չի ներկայացրել դատարան: Ստացվում է, որ Փաստաբանը Պայմանագրի առարկայում սահմանված որևէ գործողություն չի կատարել: Այսինքն **Փաստաբանը չի իրականացրել** Պայմանագրով սահմանված **բոլոր անհրաժեշտ գործողությունները,** ինչը վկայում է Փաստաբանի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ իր մասնագիտական պարտականությունները **բարեխղճորեն կատարած չլինելու** մասին:

Դիմողի կողմից ներկայացված Դիմողի և Փաստաբանի միջև նամակագրությունից, ինչպես նաև Հանձնաժողովի 26.03.2025թ. նիստում հայտնած Դիմողի դիրքորոշումից հետևում է, որ Խանում Մկրտչյանը հայցը ներկայացրել է https://cabinet.armlex.am/ էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգի **(այսուհետև՝ Համակարգ)** միջոցով, ինչի կապակցությամբ Դիմողը պահանջել էր իրեն տրամադրել հայցադիմումը և այն Համակարգ մուտք անելու հավաստումը, սակայն Փաստաբանը չի ներկայացրել որևէ ապացույց Դիմողին: Ավելին, նշվածի մասին Փաստաբանը նաև չի ներկայացել որևէ ապացույց, չի ներկայացել Հանձնաժողովի 26.03.2025թ. նիստին նշված հարցերը պարզաբանելու համար:

Ինչ վերաբերում է Փաստաբանի բացատրությամբ նշված այն հանգամանքին, որ նա կազմել է հայցադիմում Պայմանագրի առարկայում նշված պահանջներով, սակայն քանի որ Դիմողն արդեն իսկ այդ ընթացքում իր ամուսնու կողմից ստացել է հայցադիմում ամուսնալուծության վերաբերյալ, խառնաշփոթ չստեղծելու նպատակով առաջարկել է սպասել մինչև թիվ ԱՐԱԴ/0694/02/24 քաղաքացիական գործի ավարտը, ապա վերոնշյալի վերաբերյալ հայտնվում է, որ Փաստաբանը չի ներկայացրել որևէ ապացույց, համաձայն որի՝ նման առաջարկն ընդունվել է Դիմողի կողմից և ձեռք է բերվել համաձայնություն հայցը վերը նշված գործն ավարտվելուց ներկայացնելու վերաբերյալ:

Ավելին, Փաստաբանը Դիմողի շահերի արդյունավետ պաշտպանության ապահովման տեսանկյունից առնվազն պարտավոր էր ժամանակին ձեռնարկել իրենից կախված բոլոր միջոցները Դիմողի անունից հայցը կազմելու և Դատարան ներկայացնելու համար, քանի որ այդ պարագայում ողջամտորեն կարող էին կանխվել այն բացասական հետևանքները, որոնք վրա են հասել այդպիսի միջոցներ չձեռնարկելու արդյունքում: Այլ կերպ ասած, Փաստաբանի կողմից հայցադիմումը ժամանակին չներկայացնելու հետևանքով Դիմողի դեմ նրա ամուսնու կողմից ներկայացվել է հայց, իսկ այն դրամական միջոցները, որոնց անվտանգությունը պետք է ապահովվեր հայցի ապահովման շրջանակներում, այսս Դիմողի տիրապետության ներքո չեն գտնվում, ինչի պայմաններում ցանկացած գործողություն իր բնույթով կարող էր ժամանակավրեպ լինել:

Նշվածի հաշվառմամբ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Փաստաբանը Դիմողի շահերը ստանձնելու պահից ընդհուպ մինչև Պայմանագրի լուծումը, փաստացի ոչ միայն չի ձեռնարկել որևէ գործողություն Պայմանագրով առարկային համապատասխան տրված հանձնարարության կատարման համար, այլ նաև Դիմողին հավաստիացրել է, որ կատարել է անհրաժեշտ գործողություններ, դրանց ի սպառ բացակայության պայմաններում, ինչն առնվազն անթույլատրելի է:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Կանոնագրքի 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները:

7.2. Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Խանում Մկրտչյանը Կանոնագրքի 3.6.1-ին ենթակետի խախտման մասով ենթակա է պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 3.6.1-ին ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի*

մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Կանոնագրքի վերը նշված կանոնից ակնհայտ է, որ Փաստաբանը պարտավոր է պատասխանել իր վստահորդին հետաքրքրող հարցերին և կանոնավորապես տեղեկացնել իր վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին:

Տվյալ դեպքում, Դիմողի և Փաստաբանի նամակագրությունից հետևում է, որ Դիմողը Փաստաբանին ուղարկված նամակով խնդրել է հայցադիմումը և կից փաստաթղթերը Համակարգում մուտքագրվելու վերաբերյալ ապացույցը և հարկադիր կատարումն ապահովող ծառայության որոշումն ուղարկել իր էլեկտրոնային փոստի հասցեին, տրամադրելով այն Փաստաբանին, ինչից հետո Փաստաբանը նշել է, որ Համակարգը չի գործում, նորից թարմացվում է, այսօր նոր գաղտնաբառ են տրամադրել, հենց հասնի տուն Դիմողի գործի սքրինները կուղարկի: Այնուհետև ջնջել է այդ հաղորդագրությունը և նոր գաղտնաբառ ստացած լինելուց հետո էլ չի ուղարկել սքրինշոթերն, անպատասխան թողնելով Դիմողի նամակը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Կանոնագրքի 3.6.1-ին ենթակետի պահանջների խախտման հատկանիշները:

7.3. Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Խանում Մկրտչյանը Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետերի 1-ին պարբերության խախտման մասով ենթակա է պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ ***պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է*** *վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին* ***վերադարձնել պայմանագրով, ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել****, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***պայմանագրի*** *փոփոխումը և* ***լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ****, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:*

Վերը նշված իրավական նորմի և Կանոնագրքի կանոնի համակարգային մեկնաբանությունից ակնհայտ է, որ փաստաբանը պայմանագիրը լուծելիս պարտավոր է վստահորդին վերադարձնել հոնորարի այն մասը, որի դիմաց աշխատանք չի կատարվել, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան է նախատեսված: Միաժամանակ պայմանագիրը կարող է լուծվել կողմերի համաձայնությամբ:

Տվյալ դեպքում, Պայմանագրի 4.1-ին կետի համաձայն՝ *Կողմերի հանձնարարությամբ նույն պայմանագրի 2.1-ին կետով սահմանված Ծառայությունների գինը կազմված է 1.500.000 ՀՀ դրամ (ներառյալ՝ հարկերը), որից 500.000 ՀՀ դրամը վճարվում է պայմանագիրը կնքելու պահին, 500.000 ՀՀ դրամը 24.09.2024թ., իսկ գումարի մնացած մասը 500.000 ՀՀ դրամը վճարվելու է 24.10.2024թ.:*

Պայմանագրով հոնորարը վերադարձնելու վերաբերյալ կողմերի համար որևէ առանձնահատկություն չի սահմանվել, ինչը նշանակում է, որ Պայմանագիրը լուծելիս

հոնորարը վերադարձնելու հարցի առնչությամբ Փաստաբանը պարտավոր է առաջնորդվել Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 1-ին պարբերությամբ սահմանված ընդհանուր կանոնով:

Տվյալ պարագայում, Դիմողը Փաստաբանին փոխանցել է 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ գումար, որպիսի փաստը հաստատվել է Դիմողի դիմումին կից ներկայացված վճարման անդորրագրերի պատճեններով:

Դիմողը Պայմանագիրը լուծելու վերաբերյալ 15.10.2024թ. թվագրմամբ «Դիմում» վերտառությամբ գրավոր փաստաթուղթ է ուղարկել Փաստաբանին: Ի պատասխան այդ դիմումի Փաստաբանը 18.10.2024թ. թվագրմամբ գրություն է ուղարկել Դիմողին, որով նշել է հետևյալը. *(...) «Հարգելի տիկին Հ. Թովմասյան տեղեկացվում է, որ ստացվել է Ձեր դիմումը կողմերիս միջև 15.08.2024թ. կնքված թիվ 115 ծառայությունների մատուցման պայմանագիրը դադարեցնելու մասին: Ընդունում եմ Ձեր առաջարկությունը և ինքս ցանկություն ունեի նման առաջարկով հանդես գալու (...)*

(...) Տեղեկացվում է նաև, որ բանավոր Ձեզ հայտնվել է իմ համաձայնությունը պայմանագրի լուծման վերաբերյալ, միևնույն ժամանակ հայտնվել է, որ վերահաշվարկ կատարելու արդյունքում Ձեր կողմից վճարված գումարը կփոխանցվի Ձեր հաշվեհամարին (...):

Այսինքն ակնհայտ է, որ պայմանագիրը Դիմողը և Փաստաբանը փոխադարձ համաձայնությամբ լուծել է, ինչից հետո Փաստաբանը նաև համաձայնվել է վերադարձնել գումարի մի մասը, մինչդեռ Պայմանագրից բխող հանձնարարությունը կատարված չլինելու պարագայում Փաստաբանը չի ներկայացրել որևէ ապացույց Պայմանագիրը լուծելիս Դիմողին հոնորարի մի մասը վերադարձնելու վերաբերյալ:

Բացի այդ, Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ Փաստաբանի կողմից հոնորարի մի մասը վերադարձնելու պարտավորությունը ծագել և ենթակա էր կատարման Պայմանագիրը լուծելիս, ինչի աներկբա հետևում է, որ վճարված գումարները վերահաշվարկելու և վերադարձման ենթակա գումարի չափը պարզելու հարցերը պետք է կարգավորված լինեին դեռևս 18.10.2024 թվականին, երբ Փաստաբանն ընդունել է Պայմանագրի լուծման առաջարկը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 1-ին պարբերության պահանջների խախտման հատկանիշները:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառել «խիստ նկատողություն» և «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել» կարգապահական տույժերը՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խնդիրներն են՝ վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ.*

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է: Սույն խնդրի իրացման հիմնական իրավական միջոցներից մեկը Հանձնաժողովի կարգապահական գործառույթն է, որը դրսևորվում է Օրենքով և Կարգով սահմանված ընթացակարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելով:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Համաչափության սկզբունքը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին

հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Փաստաբանին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Մեղքի աստիճանը

Տվյալ պարագայում Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ գործի նյութերով հաստատված է համարվում այն, որ Փաստաբանը ոչ միայն չի ներկայացրել Պայմանագրի առարկային համապատասխան հայցադիմումը, այլ նաև իր վստահորդին տեղեկացրել է, որ ներկայացրել է այն էլեկտրոնային համակարգի միջոցով, արդյունքում ստեղծելով այնպիսի իրավիճակ, երբ Դիմողը պետք է ներկայացնի հայցադիմումի պատասխան այլ գործով, ինչից կարելի էր խուսափել, եթե հայցադիմումը Դիմողի անունից ներկայացվեր ժամանակին:

Միաժամանակ, Փաստաբանը կարգապահական գործի շրջանակներում, փաստացի չի ներկայացրել որևէ ապացույց, որը կարող էր գնահատվել կամ դիտարկվել որպես հայցադիմումը չներկայացնելու ողջամիտ պատճառ, դեռ ավելին, նաև ներկայացրել է այնպիսի պնդումներ, որոնցով փորձ է արել հիմնավորել իր անգործության իրավացիությունը, ինչն առնվազն վկայում է այն մասին, որ Փաստաբանն իրեն վերագրվող խախտումները կատարել է դիտավորությամբ:

Կարգապահական խախտման հետևանքները

Հանձնաժողովը հաստատված է համարում այն փաստը, որ ամուսինների համատեղ ձեռքբերված և բանկային հաշվում գտնվող դրամական միջոցների վերաբերյալ հայց չներկայացնելով և հայցի ապահովման միջոց չձեռնարկելու, այն է՝ այդ գումարի վրա արգելանք դնելու վերաբերյալ միջնորդություն չներկայացնելով, այդ գումարը չի արգելադրվել, իսկ Դիմողի ամուսինն այդ գումարը հանել է բանկային հաշվից և թաքցրել:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոնշյալի համատեքստում Փաստաբանի վարքագծի հետևանքով նաև խախտվել են Դիմողի իրավունքները, ինչի արդյունքում նա ստիպված է լինելու ձեռնարկել լրացուցիչ գործողություններ իր իրավունքների պաշտպանության համար:

Փաստաբանի անձը, կարգապահական վարույթները, առկա տույժերը

Հանձնաժողովը հաշվի է առնում Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները՝ այդ թվում նաև այն հանգամանքը, որ Փաստաբանը 2018-2025թթ. ընթացքում ունեցել է 4 կարգապահական տույժեր, որոնք մարված չեն, ինչից ելնելով նրա նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ չի կարող կիրառվել ավելի մեղմ տույժի տեսակ, քան

«խիստ նկատողություն», ինչպես նաև՝ որպես լրացուցիչ կարգապահական տույժ՝ «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել» տույժի տեսակները:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Խանում Սերյոժայի Մկրտչյանի (արտոնագիր՝ թիվ 278) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ քաղաքացիական դատավարությանն առնչվող թեմաներից մեկով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-24176-2-Ա
26 մարտի 2025թ.
ք.Երևան